

6699

~~4100-6~~

Ա. ՅԱԿՆԱԶԱՐՅԱՆ

„ԱԶԱՏԱՐԱՐ“-Ը




ՊԱՏՄՎԱԾՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՈՊԵՐԱՏՐԻ

ԵՐԱՎԱՆ

1926



Handwritten text in the lower right quadrant, appearing to be a signature or a set of initials. The text is very faint and difficult to decipher, but seems to consist of several lines of cursive or semi-cursive writing.

Ա. ԶԱԿՆԱԶԱՐՅԱՆ



8558

„ԱԶԱՏԱՐԱՐ“-Ը

ՊԱՏՄՎԱԾՔ



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Կ Ո Ո Պ Ե Ո Ր Հ Ր Դ Ի

Արժանացել և Հայկոտպի
գրական մրցանակաբաշխության
յերկրորդ պրեմիային.

Գրառեպ. № 763 (բ), Տիրաժ 2200, Պատվեր № 4565

Հայպետպոլիգրաֆի 2-րդ տպարան, Յերևան

„ԱԶԱՏԱՐԱՐ“-Ը

Ամառնային կիրակի յեր: Քչքչան առվի կողքին, հաստաբուն ուռենիների շվաքում, շարվի-շարան նըստած եյին արևախաշ դեմքերով առողջակազմ գյուղացիք:

Աշխատանքի, հով-քրտինքի հարազատներն եյին դրանք, վոր վեցորչա ծանր տանջաքից հետո հով ու հանպիստ եյին տալիս իրենց շարված անդամներին:

Սովերի կենտրոնը բռնել եր սպիտակ գլխարկավոր ջահելների փոքրիկ խումբը, վորի միջից նորածիլ բեխերով մի սիրունատես յերիտասարդ պատիկ տետրակը ձեռքին՝ մին կարդում եր, մին ել դառնում վոզևորված բացատրում: Դա միևնույն գյուղացի Գառնարածենց Արտուշն եր, վոր սովորում եր քաղաքում: Նա ոգտվելով արձակուրդից, հայրենի գյուղն եր յեկել՝ հատկապես սպառողական ընկերություն կազմակերպելու նպատակով:

Արտուշի կողքին նստած եր Բագվից նոր վերադարձած նավթահանքի նախկին բանվոր Պապի Սեչոն, իսկ շուրջը՝ մի քանի մեծահասակ աշակերտներ: Սրանք բոլորն ոգնում եյին Արտուշին ու լրացնում նրա բացատրությունները:

Գյուղացիք ուշադրությամբ լսում եյին յերիտասարդին և հաճախ հարցականորեն իրար յերեսի նստարդին

յուսմ: Նրանց վախկոտ աչքերում թերահավատությունն
եր ցոլում և անվորոշ մութ յերկյուղի զգացմունքը
պաշարել եր այրված, խանձված դեմքերը:

— Լավ ես ասում, Արտուշ ջան, հընգերությունը
լավ բանն ա, բոլորիս ընդունակ ա, բայց դե, ախար...
լեզվով փլավ չեն յեփում, յեղ ու բրինձդ ուրա: Մայա
պիտի լինի, մայա, կարո՞ւս ճարես, — հարցրեց մի ծե-
րունի և մորուքը շփելով շրջապատը աչք ածեց:

— Ե՛դ ասա, հա՛, — լավեց այս ու այն կողմից և
կասկածոտ դեմքերով մի հաղթական հով անցավ:

— Այ մարդ, են ա ասեց էլի, մայեն մենք ենք
դնելու, մենք, — մի քանի խրոխտ ճայներ միանգամից
խեխդեցին թերահավատ բացականչությունները:

Հակոբ բիձին ծանր թվաց այդ բանը և նա չի-
բուխը դատարկելով առարկեց:

— Ախպեր, խի՞ յեք մարդին մեղադրում. ձեր դրած
մայեն ի՞նչ պիտի լինի. ճանճից կարո՞ւս յեղ հանես,
մարդագլուխ հինգ տաս շահի դնելով խանութ լցնել
կլինի՞: Հազարներ ա պետք, հազարներ. դեմդ Շախա-
թունով կա, հանաք-մասխարությունն չի:

— Տո հենց հազարներ ել կտանք, բա ի՞նչ կա-
նենք, — տաք-տաք վրա տվեց գիժ Տիկոն, վորի գիժ
մականունը նրա անդուսպ պարզախոսության պատվա-
նշանն եր. — բա ես Աստված վեր կունի՞, վոր սաղ
գեղը մեկի ձեռին ճորտանա:

— Հրաման քեզ, կ'տաս, գիժ Տիկո, հազարներ
կդնես, բան. չի կարելի՞ նադդի վրա մի կենդ շահի*)
հանես ու աչքս կոխես, — կձու հեզնանքով խոսեց
մեծ փափախով կարճահասակ մի ծերուկ, վորին
գյուղում վերի վարդո եյին կոչում:

*) Հինգ կոպեկ:

Տիկոն իսկույն ձեռք գրպանը տարավ, բայց հիշելով նրա դատարկութունը, մեքենաբար հետ քաշեց ու շփոթված կմկմալեն ավելացրեց:

— Ե՛, լավ, հիմի չեմ տա, աշնանը կտամ, պրծանք: Հետո նա վերցրեց մի պստիկ քար ու վարդոի առաջը դնելով ավելացրեց:

— Ախպեր, յես մի իշաբեռ խաղող տվի, տեսնեմ



‘Նորածիլ բեխերով մի սիրունասես յերիսասարգ՝
սեռակը ձեռքին՝ մին կարգում եր, մին ել գա-
նում՝ փոզեվորված բացատրում:

դո՛ւ ինչ ես տալի:

— Յես ել ես տվի, առ,— պատասխանեց կատա-
կասեր ծերուկը, մի կես-փթանոց լեռ քար Տիկոյի
կողմը գլորելով,— ելավ... դե, խանութդ բաց արա...

Գեղջուկներին միահամուռ ծիծաղը բավական անախորժ դրուժյուն անաջացրեց, վորին վերջ տալու նպատակով միջամտեց Արտուշը:

— Ծիծաղելու բան չկան, շատ խելոք խոսեց Տիկոն. յերեք-չորս հարյուր տուն ենք. թե, որինակ աղքատները մի-մի իշաբեռ խաղող տան, միջակները յերկու-յերկու, կտեսնենք, վոր իսկապես հազարներ կ'հավաքվի և գործը գլուխ կգա. ընկերության խանութը ես աշնանը կը բանանք...

— Ու Շախաթունովիդ բերանը կ'ճղենք. — վոգևորված ավելացրեց Պապի Խեչոն և թեքերը այնպես յեռանդով կշտեց, վոր կասես պատրաստում եր խանութի ապրանքը դարսելու:

— Յավանշ, յավանշ, — հեգնեց Վերի Վարդոն:

Սպիտակ գլխարկավոր պատանիներից մեկը հանդես յեկավ պաշտպանելու կոռպերատիվի գաղափարը և յերիտասարդին հատուկ վոգևորությամբ բացականչեց:

— Բա ի՞նչ, հարկե, ամեն մեկս մեր ուժի չափ կ'տանք. բավական չի՞ գեղի արունը ծծեն... ախպեր, յես իմ հոժար կամքով մի խալվան*) խաղող կտամ, մենակ թե գեղն եդ վիշապից ազատվի:

Մի ուրիշ վոտաբորիկ յերիտասարդ գյուղացի, արևախաշ, պողպատ-կուրծքը կիսաբաց՝ բարձր ձայնով ավելացրեց:

— Գլխիդ մատաղ, Արտուշ ջան, ելի դու, մեկ ել Խեչոն մեր դարդին դարման կանեք, թե չե մեղ փըրկություն չ'կա... տալը կ'տանք, խի՞ չենք տա:

Նա վերջացրեց և ծխախոտը վառելով, դույլասարի գառը ծուխը թոքերի խորքը քաշեց:

*) Յերեսուն փութ

— կ'տանք, բոլորս ել կ'տանք, շատից՝ շատ,
քչից՝ քիչ. մեր ոգուսն ա՛ վո՞նց չենք տա, — լավեցին
ամեն կողմից:

Բոպին նպաստավոր եր և Արտուշը ցանկանալով
ոգտագործել ստեղծված տրամադրությունը, առաջար-
կեց Խեչոյին, ցուցակագրել ցանկացողներին՝ նշանա-
կելով ամեն մեկի տալիք խաղողի չափը:

II

Վերին թաղում, մանր-մունր՝ վտիտ շենքերի
միջից հպարտորեն ցցվել եր սև սրբատաշ քարից կեր-
տած մի դեղեցիկ շինություն: Շախաթունովի նորա-
շեն յերկհարկանի տունն եր դա:

Հսկա շենքի միջին հարկից հրապարակին եյին
նայում նարնջագույն սիրուն ներկած յերեք ծալովի
դռներ: Դա Շախաթունովի խանութն եր, վոր ճաքում
եր բազմատեսակ ապրանքից: Այնտեղ ամեն ինչ
ճարվում եր — ճոթեղենից մինչև թելն ու ասեղը: Առև-
տուրը հաջող եր. հաճախորդներն անպակաս:

Խանութում մի քանի գնորդներ կային, վորոնց
կակուղ քերթում եր Թորոս աղի քաղցրալեզու յեղբայ-
րը, իսկ նա ինքը՝ Շախաթունով մեծ աղեն, խանու-
թի հովում բազմած զրուցում եր գյուղի իշխանների
հետ: Նա պարծանքով պատմում եր, թե ինչպես ին-
քը մի որ պրիստավի մոտ հյուր եր յեղել քաղաքում,
ինչպիսի բարձրաստիճան մարդկանց հետ եր ճաշի
նստել և ինչ տեսակ անմահական կերակուրներ ու
խմիչքներ եր վայելել: Իշխաններն ուշադրությամբ
լսում եյին և մեջեմեջ զարմանքի բացականչություն-
ներ անում:

Մի շատ վտիտ՝ կարճահասակ գյուղացի ատվի կողմից կամաց-կամաց մտեցավ իշխաններին և իր ներկայութունը զգացնել տալու համար, նախ հագաց և հետո բարձր ձայնով բարևեց: Ապա նա մեջքը դեմ տվեց թթենուն և հինգ թիղանոց հասակի ամբողջ յերկարությամբ ցցվեց գյուղի իշխաններին դեմ ու դեմ: Դա կոչոտենց կարոն եր, վոր կարճության պատճառով ծաղրական մականունով՝ Մաթի Շերեփ*) եր կոչվում:

Նորեկը կրկին հագաց և իր խորամանկ աչքերը մանր բների մեջ պսպղացնելով, առաջ ժպտաց և ապա կոկորդը մաքրելով, խոսեց:

— Թորոս աղա, եղենց ելի՛, ուզում են քեզ կոտոր գցեն:

Բոլորի հարցական ու զարմացական հայացքները կարոյի վրա մեխվեցին: Թորոսը նախ խոժոռվեց և ապա ներողամտաբար ժպտալեն դարձավ լրաբերին:

— Այ մեռած Մաթի Շերեփ, ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս, եդ ո՞վ ա ինձ կոտոր գցում:

— Խի՞, չես լսե՞լ, դու լինես իմ արեւը...
-- Արևդ թաղեմ թե լսած լինեմ:

— Այ մարդ, վո՞նց ա լեզուդ զորում, ավստոս չի ես շիմշատ բոյը. — հեգնեց տանուտեր Գալոն, վորի սրախոսությանը հաջորդեց մի ընդհանուր կարճ քրքիջ:

Բայց կարոն առանց վորևե վիրավորանք զգալու, ամենայն հանգստությամբ շարունակեց իր խոսքը, Թորոս ասին դիմելով.

*) Մաթը, կամ դոշաբը, առհասարակ խոշոր կաթսաներով են յերում, այդ պատճառով նրա շերեփը սովորականից ավելի մեծ է լինում:

— Պահ, քո տունը շեն, մի վեր գնա ուռենոց
տակ, տես ի՞նչ պլաններ են քաշում, հընգերություն
են սարքում, հազարներ են վեր գալի, մաղաղեք են
բաց անում, վայ են բերում Շախաթունովի գլխին...

Յեվ նա ամուր ծափ տալեն բոլոր ուժով ծիծա-
ղեց ու թուլացած՝ մեջքի վրա հետ գնաց:

Հեզնական բացականչություններն ու բազմա-
թիվ հարցերը հաջորդեցին մեկ-մեկու:

— Այ կասես, հա:

— Դրա ինչիներն ո՞վ ա:

— Չլինի՞ թե վոսկու հանք են գտել:

— Մեղ ել հընգեր չեն անի:

— Թորոս աղա, ես անգամ վոր հացդ կերար...

Շախաթունովը ջուխտ ձեռով փորը բռնած թու-
լացել էր ծիծաղից: Կշկշոցը վերջացնելուց հետո, նա
աչքերը սրբելով սասաց.

— Վայ արևդ մեռնի Կարո, ի՞նչ մազալու նո-
րություն ես բերել, տո... դու ես ասա, վերջը վո՞նց
ելավ, վերջը, հա-հա հա...

Աղեն նորից թուլացավ:

Մաթի Շերեփը վոգևորվեց իր հարուցած հետա-
քըրքրությամբ և յերկու քայլ առաջանալով, սկսեց
մանրամասնորեն պատմել ուռենոց տակ կատարվող
անց ու դարձը՝ ավելի ուռցնելով ու ճոխացնելով
դեպքերը:

Բոլորը բերանբաց լսում էյին Կարոյին, վոր իր
պատմության ընթացքում աստիճանաբար առաջանա-
լով, արդեն այնքան էր մոտեցել Թորոսին, վոր քիչ
էր մնում նրա պինչը մտնի:

Տանուտեր Գալոն, վոր Շախաթունովի առաջ
քաշած մարդն էր ու վերջինի շնորհիվ էր տանուտե-



Նորեկը կրկին հազաց յեվ խորամանկ աչերը մանր
բների մեջ պսպղացնելով, առաջ ծպսաց յեվ ապա՝
կոկորզը մափրելով՝ խոսեց.

րական նշանին տիրացել, հանկարծ տեղից վեր թռավ
ու հովանավորի թևից քաշելով ասաց.

— Վեր կաց, թորոս աղա, Աստված սիրեք. վե-
րեք գնանք թամաշի:

Շախաթունովը, կասես վաղուց եր սպասում
նման մի առաջարկի: Նա իսկույն վոտքի յելավ ու
պապիրոսը վառելով՝ սորորալեն առաջ ընկավ: Նրա
կողքից՝ պատվավոր հեռավորությունը պահելով, գնում
են տանուտերը, իսկ հետևից գալիս եյին սուդյա
Մուկուչը, տիրացու Շատուրը, սատանա Մաքոն և
սմենից վերջը գյուղի տոհմական գզիրը՝ Գզրի Գևոն՝
յերկար ու ծուռ մահակը ձեռին խաղացնելով:

— Մեղան քեզ տեր, մեղան, մեղան, թագա հավեր
են դուրս յեկել, յերկաթե ձուլ յեն ածում, — թոնթո-
րաց տիրացու Շատուրը:

— Բան, իր գոյությունը հայտնաբերելու համար
վրա տվեց գզիրը, գուր չի ասած, թե ո՞՞՞ գլուխը
քոր գալիս, չոբանի մահակին կ'քսի. հլա տես, թորոս
աղի հետ են ուզում բաս մտնեն...

Կոլոտենց կարոն չկար: Դեռ խանութի առջևից
նա վոտը կախ եր գցել ու մի քիչ ծռանց տալով՝
աննկատելի կերպով ծլկվել:

III

Ուռենիների շվաքում ցուցակագրությունը շա-
րունակվում եր: Ներկաներից շատերը գրվել եյին ըն-
կերության շարքում, ամեն մեկը խոստանալով իր
կարաց չափ խաղող դնել վորպես փայ: Հերթը վերի
Վարդոփինն եր:

— Դե ասա, Վարդան ապեր, դու ինչքան ես

դնելու, մի խալվար ել քեզ գրեմ, հա՛, հարցրեց Պա-
պի Խեչոն ձեռի մատիտը թղթին մոտեցնելով:

— Գրի, այ մարդ, բա վո՞նց. գեղի հանփա յա,
նա վոր չտա, ո՞վ կ'տա—ամելացրեց Արտուշը:

— Գրի, գրի, տվող ա, կ'տա, ի՞նչ պիտի ասի,
ձայներ լավեցին այս ու այն կողմից:

Վարդոն միրուքը շփեց և գլուխը բացասաբար
որորելով, պատասխանեց.

— Ձե, ախպեր ջան, ինձ մի գրի, շնորհակալ
եմ... պարզ ասած՝ չեմ հավատում. հազար անգամ
ընկել եմ, որ-մեծություն ել չեմ ուզում խափնվեմ:
Աման, ձեռք քաշեք ինձնից, — վերջացրեց ծերունին՝
ոձիքը պինդ թափ տալով:

Վարդոյի խոսքերը վորոշ շփոթություն առա-
ջացրին ունկնդիրների շրջանում: Արտուշն իրան վի-
րավորված զգալով, փորձեց հակաճառել և կոտրել ծե-
րուկի համառ թերահավատությունը:

— Ամոթ ա, Վարդան ապեր, եստեղ խաբեբա չկա:

— Տո խի՛ չի կա, չարդ տտնեմ, հազար անգամ
չեմ ընկել—ընդհատեց նա Արտուշին, — դու ջահել ես,
չես հիշի, համա ես հասակավոր մարդիկ գիտեն՝
երկու-իրեք հազար մանեթ ամբարի փող կար, ո՞ւր ա.
Շախաթունով թորոս աղեղ անուշ արեց: Ախպորա
ասեմ, առվի համար մեծ գումար եյինք հավաքել, ի՞նչ
ելավ—տանուտերդ կերավ, մարսեց. սուտ եմ ասում,
այ մարդիկ, — դիմեց նա նստողներին:

— Շիտակ ս ասում, ախպեր, կերան, կերան,
լավեցին, վավերացրին հասակավոր գյուղացիք:

— Դրանից հետո, հոգուդ մատաղ, — շարունակեց
ծերունին յերրորդ մատը խփելով, — ուսումնարանի
փողերը Սատանա Սաքոն չ'կլանեց. ժամի ութ հարուր

մանեթը յերեցփոխ Ոհանը չ խժռեց... ախր մինը
չի, անուհիդ մատաղ, հինգը չի, տասը չի, վո՞ր մեկն
ասեմ... հենց ում ձեռը վոր փող ընկավ՝ կերավ ելի,
աչքներս վախեցել ա, խի՞ յեք մեզ մեղադրում:

Վարդոն ճառն ավարտեց և թութունի քսակը
հանելով, սկսեց շիրուխը լցնել:

Արտուշը փորձեց յերիտասարդության պատիվը
պաշտպանել և ինքնավստահ շեշտով ասաց.

— Քո ասածը հին գելերն են, Վարդան ապեր,
նրանց մեղքը գուր ես մեր յերեսովը տալի:

— Թագն գելեր, ջահել գելեր ել եմ տեսել, հոգի
ջան, մեր գրագիր Գրիշը չե՞ր, գիտես ելի, վոր խոսում
եր՝ կասես բաբունի լիներ, բերնից մարգարիտ եր
թափվում, բա վո՞նց գեղի տարեն հարկը հազարնե-
րով տակը քաշեց ու վոտով գլխով կորնով... ախպեր
գելի հինն ու թագեն վո՞րն ա, ձեռն ընկավ՝ կուտի,
նոր ինձ բան եք սովորցնում:

Վարդոն վերջացրեց և թութունի դառը ծուխը
ազահությամբ ծծելով՝ ինքնաբավական հայացքը
ուսկնդիրներին վրայով սլտտեց, կասես ճառի տըպա-
վորությունն ստուգելու նպատակով:

Տիրեց կարճատև ծանր լրություն, վորի ընթաց-
քում ցուցակագրված գյուղացիներից շատերը կաս-
կածանքով իրար յերեսի նայեցին ու գլուխները բա-
ցասաբար որորեցին: Յերևում եղ, վոր Վարդոյի խոս-
քերը խսիտել էյին նրանց նախկին հավատը և շա-
տերը կասես փոշմանել էյին: Գործը մասամբ վտանգ-
ված եր: Պետք եր դրությունը փրկել:

Արտուշը վոտքի յելավ և մի ուժեղ ճառ ասաց,
վորի մեջ կշտամբում եր ծերերի հայտնաբերած ծայ-
րահեղ անվստահությունն ու բողոքում, վոր կեղեքիչ

իշխանների արատը մաքուր գաղափարով տոգորված
յերիտասարդների յերեսին են շարտում և առանց վո-
րևե պատճառի նրանց. ազնվությունը կասկածանքի
տակ գցում:

— Մարդդ ճանաչի, ապեր, մենք քո ասած-
ներից չենք — վերջացրեց Արտուշը:

— Յանի վհուկ, բերան չունե՞ք...

— Ունենք, — շեշտեց յերիտասարդը:

— Աման, վոր բերան ունեք, կուտե՞ք, — վրա
բերեց ծերուկը, վորի խոսքերը ծածկվեցին միահա-
մուռ քրքիջով:

— Բան, չալ ոճի կծածը չալ չաթվից ել կփախ-
չի՞, — ավելացրեց Նուշիկանց Սաքոն՝ չախմախին ա-
մուռ խփելով:

— Ախպեր, չեմ հասկանում, վախելու ի՞նչ կա
եստեղ, — տաքացած միջամտեց Պապի Խեչոն, — մի
բան վոր քարն ելա ձեր ձեռին, պոպոքն ել: Հընգե-
րության տերն ու տիրականը դուք եք. մաքուր
գործը հո չեք քցի գեղի ցեցերի ձեռը: Ձեր հավանած՝
հավատարիմ, շիտակ մարդիկ կ'նտրեք ելի:

IV

Ուռենոց տակ հանկարծ շշուկ բարձրացավ և
բոլորի հայացքները ուղղվեցին դեպի ձախ, վորտեղից
գալիս եր Շախաթունովն իր թիկնապահների խմբով:

Նստողներից Չահելները վոտքի յելան, իսկ ծե-
րերը ենպես, մի քիչ կռացան ու շտկվեցին, վորպես
հարգանքի նշան: Անշարժ եյին միայն Արտուշն ու
Խեչոն և սպիտակ գլխարկավոր Չահելներից յերկուսը:

Թորոս աղեն ընդհանուր բարև տվեց և աչքերը
հանդուգն յերիտասարդների վրա խոժոռելով, նստեց

պատի առջևի ազատված թմբի վրա: Նրա շուրջը
նստոտեցին իշխանները:

— Քանզվելո՞ւ գեղ ա, ել վոչ մեծ կա վոչ պու-
ճուր, — թոնթորաց տանուտերը, տեղ բռնելով թո-
րոս աղի աջ կողքին:

Տիրեց կարճատև լռություն: Հարևաններն իրար
հետ փսփսացին. փոթորիկ եր սպասվում:

— Հն, — լռությունն ընդհատեց Արտուշը, —
ուրեմն վախելու վոչինչ չկա. խոսքի, յեթե մեկը գըր-
վեց ու տեսավ, վոր ընկերության գործերը վատ են
գնում, կարող ա իր փողն առնի ու հեռանա:

— Պրծավ, գնաց, — վրա բերեց Պապի Խեչոն.
ստիպելու բան չկա, ամեն մարդ իր կամքի տերն ա,
կուզի՝ մնա, կուզի՝ հեռանա:

Հետո նա ցուցակի անունները համարելով ավե-
լացրեց — եստեղ արդեն տասնութ հոգի գրված են,
ասեք տեսնեմ ել ով ա ուզում հընգերանա:

Նորից կարճատև լռություն, բռնազբոսիկ հազի
ձայներ:

— Ամոթ չլինի հարցնելը, եդ ի՞նչ հընգերու-
թյուն ա, — մեղալները շտկելով խոսեց սուղիա Մու-
կուչը.

— Սկի, ուզում ենք ընկերովի մի պատիկ խա-
նութ բանանք աղքատ-ուղքուտի համար, — դժկա-
մությամբ պատասխանեց Արտուշն ու դառնալով
գյուղացոց՝ ավելացրեց, — ասեք տեսնեմ, ել ով ա
ուզում գրվի:

— Յես, — լռության մեջ լսվեց Սատանա Աա-
քոյի կես-լուրջ, կես-հեգնական պատասխանը, — ինձ
չե՞ք գրի:

Վոչ, — վրա բերեց Խեչոն լուրջ ու խիստ շեշ-

տով, վորին հաջորդեց ժողովականների խեղդված
քրքիջը:

Իշխանների շրջանում իրարանցում սկսվեց: Թո-
րոս աղեն վերից-վար մի արհամարհական հայացք
զցեց Խեչոյի վրա, իսկ սուղիեն ներքին զայրույթը
զսպելով հարցրեց.

— Պատճառ.

— Ձեզպեսների տեղը չի, — հնչեց. Արտուշի ու
Խեչոյի միասնական ու շեշտակի պատասխանը:

— Ստեղծվեց մի անախորժ կացություն, վորը
մեզմեկու համար տիրացուն տերվողորմին բարձրա-
ձայն շխշխկացնելով մրմնջաց. —

— Մեղա՛քեզ, տէր, մեղա՛ — մեղա՛:

— Ասել կուզի մեզպեսներին մարդահաշիվ չե՞ք
անում, — հոնքերը հավաքելով իշխանական խստու-
թյամբ նկատեց տանուտերը և հանդուգն Արտուշին
վոտից գլուխ չափելով ավելացրեց.

— Մի քեզ մտիկ, գառնարած պապիդ մտիկ ու
ասածդ խոսքերին...

— Նրա պապը քեզնից ինչո՞վ եր պակաս, — վրա
քերեց Արտուշի կողքին նստած սպիտակ գլխարկավոր
յերիտասարդը, Պառավենյ Սաքոն, վորի խոսքն ընդ-
հատվեց Թորոս աղի հաստ բասով:

— Սո՛ւս, տա՛գ արա, շան լակոտ. ձենդ կտրի՛,
թե չե լեզուդ ծործորակովդ կհանեմ.

— Իրավունք չունես...

— Ի՞նչ ես բերանդ շաղ տալի... գոչեցին բորբոք-
ված Սաքոն ու Խեչոն, բայց Արտուշը նրանց զսպեց
և ինքը կարմրատակած, ձայնը դողալով՝ ասաց —

Պարոն Թորոս, կարդին խոսի, թե չե վատ բան
դուրս կը գա:

— Հը-լա-տե՛ս, հը-լա-տե՛ս, բերնին մտիկ, —
 ատամները կը ճտացնելով մըթմըթաց տանուտերը:



Տանուտեր, գասա՛վոր ես, մի հարցրու եղ լակոսին,
 տեսնե՛նք ո՞վ ա գրան իրավունք սկել, վոր գա եսեղ
 ժողով անի ու գեզն իրաւ գլխով տա:

— Դե կորի՛, հարամգաղա, բղավեց Շախաթու-
 նովն՝ Արտուշի աչքերի մեջ նայելով, — սպիտակ գը-
 տակ ես դրել՝ քեզ մեծ մարդ ես համարո՞ւմ... լավ
 իմացի, վոր քեզ պես քառսուն շուն կա իմ դռանը...

Վրդովված յերիտասարդները բողոքի բացական-
 չություններ արձակեցին, բայց ապարդյուն:

— Բա՛, ո՞ւմ հետ եք վատ մեկնում, — ավելացրեց
 Սատանա Սաքուն:



A 8549

Սուղիեն, վոր մինչև այդ լուռ լսում եր, պարտք համարեց Շախաթունովին ոգնել և Արտուշի հասցեյին սրախոսեց:

— Աստված վողորմացել ա, դառնարածի թոռն ա, թե չե, վոր նախարարածինը լիներ, մեզ գեղիցը կը քշիր:

— Ե՛դ ասա, հա՛, — գոչեցին իշխանները բարձր ծիծաղի միջից:

Սուղիեն ուռեց և կուրծքը դուրս գցելով՝ հըպարտությամբ մեղալները շոշափեց:

Սեչոն հանկարծ վեր թռավ.

— Տեսնեմ խի՞ յեք ծիծաղում, դառնարածը ձեզանից հազարապատիկ լավ ա, — ուժեղ շեշտով կպցրեց նա:

— Ենքան լավ ա, վոր հալալ աշխատանքով ա ապրում. — կիսաձայնով ավելացրեց գիժ Տիկոն և տանուտերի ճիպոտի անակընկալ հարվածից վախելով, կուզեկուզ քիչ հետ քաշվեց:

— Իմ պապերը ձեզ պես հարամ չեն կերել, վրաբերեց Արտուշը, վոր հուզմունքից կանգնած տեղում ամբողջ մարմնով դողում եր:

Իսա արդեն հանդգնության բարձրագույն աստիճանն եր: Տանուտերը չեր կարող այդ չափ սանձարձակութուն թույլ տալ: Իշխանության պատիվը բարձր պահելու համար նա շտապով տանուտերական նշանը չուխայի վաղմատեղից դուրս հանեց և ձեռի կարմիր ճիպոտը ողի մեջ թափահարելով՝ գոչեց.

— Սո՛ւս, անամոթ շուն, շանվորթի... բերանդ բահով ա բացած. սո՛ւս կաց, թե չե ուխդ ջարդ ու փշուր կանեմ, հա՛... վհնց ես հիմի աչքիդ բերեկը.

հանեմ, — ավելացրեց նա ճիպոտի ծայրն Արտուշի
աչքի առջև պտտելով:

Արտուշն՝ զգալով իր անզորությունը, դողի մի-
ջից տկար ձայնով արտասանեց:

— Ամոթ ա, ձեռք քեզ քաշի, տանուտեր:

Խեչոն հեալով վոտքի յելավ և բուռն սքնե-
րը սեղմած ուզեց վրա հարձակվել, բայց մի քանի
ջլուտ ձեռքեր զսպեցին նրա թափը:

Վերի վարդոն բռնեց տանուտերի ձեռը ու հետ
բռթելով աշխատեց հանդատացնել:

— Վնաս չկա, տանուտեր, դատավորը ներող
կլինի. դե ջահել են, նրանց ջուրը դեռ դարիդուս ա
գնում:

Թաթոս աղեն, վոր դեռ յելս չեր մոռացել Ար-
տուշի շարտած վիրավորանքը, Գալոյի փեշից քաշե-
լով ասաց.

— Տանուտեր, դատավոր ես, մի հարցր՛ւ եդ
լակոտին, տեսնենք ո՞վ ա դրան իրավունք տվել վոր
դա եստեղ ժողով անի ու գեղն իրար գլխով տա:

Պատրվակը պատրաստ եր, տանուտերը հըրճ-
վանքով փարեց նրան ու ձեռն Արտուշին մեկնելով
գոչեց.

— Հա, թուղթդ ո՞ւր ա, հարամգադա, հանի
տեսնեմ. քեզ ո՞վ ա իրավունք տվել, վոր դու եստեղ
ժողով անես ու գեղը խառնակություն գցես:

Արտուշը շփոթված եր, նա հեալով նայում եր
տանուտերի աչքերին: Անզոր զայրութն ալեկոծում
եր կուրծքը:

— Ժողովս վճրն ա, այ մարդ, շառի բուն ե՞ք:
Կիրակի յա գեղամիջին նստել ենք զբից անում, ի՞նչ
իրավունք ես հարցնում, — ընկերոջը պաշտպանու-
թյան յեկավ Խեչոն:

Թորոս աղեն խեթ-խեթ նրան նայելով վոտից
զլուխ լավ տնտղեց և զլուխը տմբացնելով ասաց:
— Գիտե՞նք, գիտե՞նք Պասլի Սեչո, քեզ ել լավ
ենք ճանաչում, թե ինչ բարի պտուղ ես. Բալախա-
նից դադախներով խրկեցին, հիմի յեկել գեղումն եւ
խառնակչություն անում հա... դառնարածի թուխ
հետ ցոցալություն*) եք քարոզում, գեղը բունթ եք
քցում հա, չեք մարսի, չեք...

Տանուտերը, վորի ձեռը գեռ մեկնած եր մնա-
ցել, կրկնեց ու յերեքնեց պահանջը և յերբ տեսավ,
վոր Արտուշը պատշաճավոր մանդաս չունի, դառնա-
լով գզրին, հրամայեց ձերբակալել «ցոցալ»-ներին և
խակույն ուրեղնիկին ներկայացնել:

Անգործությունից ձանձրացած գզիր Փետն կա-
սես վաղուց եր սպասում նման մի հրամանի: Նա
խակույն ձգվեց, աշխուժացավ և իր պաշտոնի բարձր
պատասխանատվության գիտակցությամբ լցված՝ ան-
միջապես գործի անցավ: Ամենից առաջ նա ստուգեց
իր գոտուց կախված տոհմական մեծ խանչալի ներ-
կայությունն ու ապա մարդկանց շարքերը ճեղքելով
պահանջեց ճամփա մաքրել: Հետո նա ծուռ մահակը
ողի մեջ բարձրացրած մոտեցավ կենտրոնին և Ար-
տուշին ու Սեչոյին բոթբոթելով հրամայեց անցնել:

— Վերջ տուր. այ մարդ, բռնելս վո՞րն ա, խրդ-
ճի հակառակ բան ա, գեղացի յենք՝ նստել խոսում
ենք, ի՞նչ կա, — կարեկցարար միջամտեցին այս ու
այն կողմից գյուղացիք, փորձելով մի կերպ խնդիրը կոծ-
կել, բայց տանուտերն ու գզիրը մնացին անդրդվելի:

— Ձեզ համար վոչինչ չկա, խաղ ու պար եք
համարում. ել չեք ասում՝ եզուց ելոր պրիստավի

*) սոցխալխաություն

ականջն ընկավ թե գեղումը «ցոցալ» կա, ինձ կասարե՞ժնի կ' քշի... ձեր ի՞նչ 'վեջն ա, խի՞ չեք լավամարդ լինի, — պատասխանեց տանուտերը և գլխով նշան արեց Գեվոյին՝ շարունակել իր դորձը:



Տանուտերը շատով սանուտերական նշանք վազմասեղից դուր նայեց յեվ ձեռքի կարմրե կիպոսը ողի մտջ քափահաբելով՝ գոչեց,
— Սուս, անամոր շուկ...

կտրեմ ես գեղից, սպիտակ գդակը... հաղթական յեղանակով բացակասնչեց թորոսը կալանավորների հետևից:

— Շիտակ ա ասում, բա ի՞նչ, — հավանություն տվեց Գեվոն, — ձեններդ տաք տեղից ա դուրս գալի, ել չեք ասում՝ գեղի մեղքը տանուտերից են ուզում. ես նիկոլի որենք ա, հանաք — մասխարություն չի... դե, յանլա, ժամ եկեք, թե չեմեղք եք, ծործորակներդ կ' նախշեմ. — սպանաց նամահակը՝ ողի մեջ պատելով և «ցոցալների» թիկունքից կոպտությամբ բռնաբռնելով:

Արտուշն ու Սեչոն ճարակաուր յինթարկվեցին որենքին ու գլխակոր առաջ անցան:

— Սպիտակ գդակը պիտի

Տարիներ անցան: Նիկոլն ընկավ և նրա բոլոր պաշտպանները հետը թևաթափ յեղան:

Մի որ քաղաքում Շախաթուհովի ականջին սարսափելի լուրեր հասան: Ասացին, վոր խոր-
հեռում արյունն աշխարհքը բռնել է, մերը մանուկն
ուրացել. թե բանվորներն ու գյուղացիք աղաների
դեմ ծառացել, իշխանությունը նրանցից խլել են ու
թե կովի մեջ ամեն ինչ ավերի յե մատնված...

Թորոս աղի թևերը միանգամից թուլացան. յե-
ղած սիրտն էլ կտրվեց: Նա զգում էր, վոր այդ ախար
իրենց կողմն էլ պիտի անցնի.

— Տէր, դու հեռու տանես, դու մեզ փրկես
ու ազատես, — մրմնջաց նա վախվորած ու շնչասպառ
դարձավ տուն:

Այդ պիշեր աղի աչքը բոլորովին չկպավ: Նա
պուլիկի մեջ հավաքեց սն որվա համար պահած Նի-
կոլի վոսկիները և թագցրեց մառանի հաստ պատի
մեջ, բարձր առաստաղի մոտ: Ապա նա խանութից
կրեց տուն արժեքավոր ապրանքները և գլուխը փո-
րը քաշած սկսեց սրտատրոփ հետևել վրա հասնող
դեպքերի փոթորկալի ընթացքին:

V I

Թավալվեցին յերեք-չորս աղետալի տարիներ.
կովի, սովի, փախեփախի, անվերջ արյան ու տան-
ջանքի ծանր ու դաժան տարիներ, մինչև վոր հյու-
սիսի մեծ հեղափոխության հրաշունչ ալիքները հա-
սան Հայաստանի ձյունափայլ գագաթներին:

Թորոս աղի չոր գլուխը թեև մի կերպ ազատվել
էր համատարած արյան ծովից, բայց վայ են
ազատվելուն: Քիթը բռնեյիր, հոգին կ'փչեր: Նա շըշ-
մեղ էր ջրից հանած ձկան պես... Արդեն կորել էր
ամեն ինչ. էլ չկար ծովի պես ծփացող տունը, հա-
րուստ խանութը, լի ամբարները, լավ-լավ հողերը,

մալ ու մուլքերը... Շախաթունովը կ'ցնդեր, կը-
խեղդվեր հուսահատությունից, յեթե անձեռն-
մխելի մնացած չլիներ այն նվիրական պուլիկը:
Մառանի մթության մեջ կապույտ լեռ քարի հետե-
վից ցույցոդ դեղին վոսկիների անտեսանելի փայլը
կասես շոյում, շերմացնում եր թորոսի սառած հոգին ու
շունչ տալի նրա կիսամեռ սրտին:

Յերբ բորբոքված կըքերը կամաց-կամաց հան-
գատացան, մթնուլորտը մաքրվեց վառողի խեղդող
ծխից, արնակոլով դաշտերը սկսեցին վոռոգվել աշխա-
տավոր գյուղացու ճակտի հալալ քրտինքով և ալե-
կոծ կյանքը նորից խաղաղ հունի մեջ մտավ, թորոս
աղին վախվխելեն գլուխը դուրս հանեց ծակից և
սկսեց ուշի-ուշով դիտել շուրջը:

Սարսափն արդեն անցել էր: Սմեն մեկը իր
համար ապրուստի միջոց եր վորոնում: Շախաթունո-
վը տեսավ, վոր քաղաքում հին վաճառականներից
վոմանք նորից առուտուր են սկսել, կամաց-կամաց
սրտապնդեց և վորոշեց վերաբացել խանութը:

Վերջապես նա ձեռք մեկնեց նվիրական պուլի-
կին և վոսկիների մի մասը առնելով՝ դնաց քաղաք
ապրանքի: Շուտով խանութի դռները բացվեցին և
բազմազան ապրանքները զարդարեցին փոշոտ վան-
դակապատը:

Առևտուրն սկսեց արագ թափով զարգանալ ու
քիչ հետո թորոսն արդեն կանոնավոր մագազինի
տեր դարձավ: Թվում էր, թե հին աստվածը նորից
աչքը քաղցրացրել էր նրա վրա և են նախկին վոս-
կեկտուց գովաքք արագ-արագ մոտենում էր Շա-
խաթունովի շեմքին:

Բայց այդ բանը դուր չեր գալիս գյուղացիներ-

բից շատերին: Ամենից շատ գրգռվում և անհանգըստանում եր կոմբըիջը և մանավանդ նրա քարտուղար Արտուշն իր սրտակից ընկերներով, վորոնք մեծ դեր եյին խաղացել հեղափոխության որերին, քաղաքացիական կռիվների ընթացքում: Այժմ նրանք շարունակ միջոցներ եյին վորոնում վտանգավոր կուլակի ախորժակը սանձելու:

Թորոսն զգալով այդ բանը, աշխատում եր ամեն կերպ սիրաշահել ու մտենալ — **Քնկերներին**, — բայց իզուր: Սորամանկ վաճառականի կեղծավոր հաճոյախոսությունները հանդիպում եյին նրանց սառն արհամարհանքին:

Շախաթունովը գիտեր, վոր բըիջը թակարդներ ե լարում իր դեմ. նա կռվի յեր սպասում և պատրաստվում եր պայքարից հաղթանակով դուրս գալու: Նա իր շուրջն եր համախմբում գյուղի հարուստ և ազդեցիկ տարրերին, իրավագուրկ համփաներին, թևակոտոր իշխաններին ու բոլոր գաղվածներին:

Նա ամեն կերպ պահում ու շահում եր դրանց և նրանցից իր համար ամուր բերդ եր պատրաստում:

Մի բան ամենից շատ եր ջղայնացնում Թորոսին, դա կոռպերատիվ խանութի ուրվականն եր: Վերջերս համառորեն խոսում եյին, թե գյուղում սպառողական ընկերություն են հիմնում: Անցյալ որն Արտուշը գյուղամիջին ասել եր, վոր շուտով Հայկոսպից մարդ պիտի գա՝ կոռպերատիվ բանալու. իսկ այդ «անիրավի» ասածները հո միշտ կատարվում եյին:

Վերջապես հասավ Թորոս լողին վախեցնող սև որը:

Աշնանային մի զովաշունչ իրիկուն եր: Դպրոցի մեծ դաստիարանում ասեղ գցելու տեղ չկար: Արտուշը

նախագահում եր ժողովին, իսկ Հայկոտպի յերիտա-
սարդ հրահանգիչը գյուղացիներին մատչելի բաներով
բացատրում եր սպառողական ընկերության նպա-
տակը և նրա անդամների իրավունքներն ու պար-
տականությունները: Ժողովուրդը ուշադրությամբ
լսում եր հրահանգչին և հաճախակի հավանության
բացականչություններ արձակում: Հարևան շրջանում
գործող կոոպերատիվի հաջողությունը մի այնպիսի
խոշոր, կենդանի փաստ եր, վոր ցրում եր բոլոր թե-
րահավատների նախկին կասկածներն ու վախը:

Ժողովին ներկա էյին նաև Թորոսն ու իր թիկ-
նապահները, վորոնք դասարանի մի անկյունում կո-
չուրած լուռ լսում էյին ու գլուխները խորհրդավոր
յեղանակով որորում:

Յերբ հարցերն սպառվեցին և ել կասկած չմնաց,
վոր գործը գլուխ կ'գա, սուղիա Մուկուչը հազաց և
առանց ձայն խնդրելու դիմեց ուղիղ հրահանգչին:


... Կնվ բան ա, լնվ, հընգեր ջան, բոլորիս ըն-
դունակ ա, մենակ մի բան սլարդ չեկավ. ասենք խա-
նութը բացվեց, հակերով ապրանքն յեկավ, տեսնենք
նրա իրավունքն ո՞ւմն ես տալու:

Նա վերջացրեց և ըստ իր վաղեմի սովորության
կրծքի մեղալատեղի ամայությունը շոշափելով, հան-
դիմանական հայացքը ժողովականների վրա գցեց:

— Այ, խելոք հմրց, ի՞նչ եմ ասել, — հավա-
նություն տվին սուղիի հարևանները:

— Իրավունք տվողը յես չեմ, ընկեր ջան, —
քաղցրությամբ պատասխանեց հրահանգիչը, — ասացի
վոր դա ձեր, անդամներիդ իրավունքն է. ում վոր
ուզեք, վորին ինքներդ հավանեք, նրան ել կառա-
վարիչ կդնեք:

— Խոսքի՛ ընենց... ուժը տեղը, հետիքարով, ճարտար մարդ ա հարկավոր չե՞, — հետաքրքրվեց Սատանա Սաքոն, վոր խորապես համոզված եր, թե այդ բոլոր



արժանավորությունները մենակ իր անձի մեջ են միանում:

— Բա վհնց, այ մարդ, մի խելքիդ տուր, եստեղ հազարներ են դնում, սովածներին հո չեն տա, — հանդիմանեց նշանազուրկ տանուտերը և շարունակեց. — Ես գործի մեջ թորոս աղի պես մարդ պիտի, վոր կոպեկը չսողացնի, թե չե մի ամսուսը կոպերատիվիդ թողը յերկինք կհանեն:

Ժողովին ներկա էին նաեւ Թորոն ու իր քիկնապահները

ասում, — լավեցին մի քանի խռպոտ ձայներ Շախաթունովի շրջապատից:

Արտուշը, վոր մինչև այդ համբերությամբ լսում էր, տեսնելով, վոր իշխաններն աշխատում են գործը քանդել, եւ չկարողացավ ինքն իրան զսպել և նախագահին վայել սառնասրտությունը մոռացած, գոչեց.

— Ինչ-ի՞նչ... չե, քարեկամ, ձեր դարն անցավ. եւ չեք կարող ժողովրդին խաբխրել: Բո՛ւ ա ինչքան

Թալանեցիք ու կերաք, հեռու կեղտոտ ձեռներդ, ընկերությունը ձեզ պես տղրուկների տեղը չի:

Արևախաշ գյուղացիք ժպիտները յերեսին իրար կողքի հրելով կամացուկ փսփսացին: Յերևում ելավոր Արտուշը նրանց սրտից ջուր խմեց:

Իրավագուրկ իշխանները ներքին զայրույթը դսպած՝ գլուխները որորելեն միմիանց յերեսին նայեցին ու վերջում բոլորի հայացքները թորոս աղի դեմքի վրա կանգ առան. ըստ յերևույթին վերջինս պիտի լիներ այս խայտառակ դրությունից հանողը:

Թորոսը ծծեց կիսատ պապիրոսի վերջին մնացորդը և պնչերից ծխի թանձր քուլաները հանելով, բողոքն ուղղեց հրահանգչին:

— Ես ի՞նչ խայտառակ ժողով ա. ասել կուզի հրամանքդ ժողովրդին կանչել ես անպատվելու, ցեխը կոխելու համար...

— Ժողովրդին վերավորող չի յեղիլ, դուք կարող եք միայն ձեր մասին խոսել. — կտրուկ շեշտով պատասխանեց Արտուշը:

— Ուրեմն մենք ժողովուրդ չե՞նք:

— Իհարկե վո՛չ, դուք ժողովրդի թշնամին եք, — բորբոքված վրա բերեց նախագահը:

— Հլա տե՛ս, հլա տե՛ս, — ատամները կրճտացնելով մրթմրթաց սուղիեն:

— Տեր վողորմի՛ւ, տեր վողորմի՛ւ, — արձագանքեց տիրացուն:

Հրահանգիչն արտուշի փեշը քաշեց և ականջին մի ինչ վոր բան փսփսաց: Ըստ յերևույթին նա հիշեցնում էր նախագահի սլարտականությունն ու հորդորում չբորբոքել կրքերը:

Թորոսը կատաղությամբ շուրջը նայեց և դառնալով ժողովրդին բացականչեց.

— Ա՛յ գեղացիք, այ ժողովուրդ, հոգով խոսեք, դուք ձեր խիղճը, ասեք, վորի՞դ տունն եմ քանդել, քանի՞ արունք եմ արել, վորի՞դ վորդին եմ մորթել...
Կարճատև ու ծանր լռության միջից լսվեց Մաթի Շերեփի սուր ձայնը.

— Ափսոս չի՞ Թորոս աղեն, գեղի ճրագ ա, խեղճին հարեհաս, աղքատին՝ մուրազ:

Բոլորի հայացքները ուղղվեցին դեպի հետ, ուր նստարանների միջից հազիվ հազ նշմարվում էր Կարոյի պատիկ գլուխը:

— Ե՛ֆ, մի գավ արաղդ եկավ, — նկատեց Պապի Խեչոն, վորից հետո ուժեղ քրքիջ բարձրացավ:

— Շիտակ ա ասում ելի, մարդը միշտ լավ ա ելել, հոգի սևել, խիղճ մեռցնելն ի՞նչ բան ա...

Շախաթունովը չլինելը, գեղի կեսը հոգեց-հոգի կ'կորչեր... ուտել-ուրանալը լավ չի, — խրատեց Թորոսի խնամին, վոր շատ հեռու յեր ընկել իշխանների շրջանից:

— Ըտենց ա, կակուղ փուշ ա, — լսվեց կոմյերիտականներից մեկի, Բաղալի Արամի յերիտասարդական խրոխտ ձայնը և դահլիճը լցվեց անզուսպ ծիծաղով:

Թորոսը, վոր մինչև այդ սպասում էր ժողովականների յեռանդուն պաշտպանությանը, հիասթափված էր արդեն, ներքուստ սաստիկ կատաղած: Թույնը արդեն մինչև կոկորդն էր հասել. պետք էր մաղձերը թափել:

— Կակուղ փուշ եմ, հա՛, բա են վո՞նց էր մեկել տարին հացի համար վոտս իր լիզում, մոռացե՞լ ես, Բաղալի բիջ...

Արտուշը վոտքի յելավ և թորոսին ընդհատելով
կարդի հրավիրեց ու սպանաց, վոր հայհոյանքը կըր-
կնվելու գեպքում նրան ժողովից դուրս կանի:

— Փորդ կշտացրի հա՛, — շարունակեց թորոսը՝
աչքով Արամին ուտելով, — հիմի հարկե, համ փո՛ւշ
կըլեմ, համ ել թշնամի կըլեմ.....

— Տո տվել ես, հո հոր հոգու չես տվել. մեկին
հինգ, մեկին տասը սլոկած կլես, գիտեմ դու ինչ
պտուղ ես, — գոչեց Տիկոն՝ համբերությունից դուրս
գալով:

Արամը բարկությունից գունատված՝ հանկարծ
տեղից վեր թռավ և շեշտակի թորոսի աչքերի մեջ
նայելով՝ ճակատ առ ճակատ գոչեց.

— Հո սուտ չի, վոր թշնամի յես ու դահիճ...
մարդասպանը հազար անգամ քեզնից լավ ա. նա մի-
անգամ սպանում ա վերջացնում, իսկ դու աղքատի
արյունն ես ձծում ու տարիներով կիսամորթ արած
թրպրտացնում... դու մեզ կենդանի յես քերթում...

Աղմուկը դասարանը վեր կալավ: Յերիտասարդ-
ներից յերկուսը ծափահարեցին Արամին, շատերի շըր-
թունքներից մեքենարար հավանության բացականշու-
թյուններ թռան, մյուսների դեմքերով մի կարճատև
վախլուկ ժպիտ սլացավ ու անմիջապես մարեց:

Սաստիկ վրդովված եյին թորոս աղի շուրջն հա-
վաքված վ սղեմի իշխանները, վորոնք բարձր աղմկե-
լով հայհոյում եյին Արամին ու նրան դաս տվողին:

Նախագահը անդոր եր կարգը վերականգնելու:
Տիկոն փորձեց դադարեցնել աղմուկը, ոգտվելով գյուղ-
խորհրդի նախագահի իրավունքից և դիմելով Արտու-
շին — բոլոր ուժով վորոտաց,

— Ախպիր, թույլ տուր, գազանների խումբն եստե-

դից հեռացնեմ, վոր գործը կարգի ընկնի. թե չե քանի
գառն ու գելը խառն են, դալմադալին վերջ չի ըլի:

— Ո-հո, վոնդուս եք, հա՛, — ծորեց թորոսը զայ-
րույթով, — խորովածի հոտ եք առել, վախում եք մաս-
նակից լինենք... չուզեցինք ախպիր, հարամ ա մեզ,
կերեք, կերեք, ենքան լափեք, վոր փորներդ պատու-
վի...

— Սո՛ւս, բավական ա վայրիվերո բղավես, բար-
կությամբ ընդհատեց նախագահը, — քեզ ասում եմ
թիկնապահներդ հավաքի ու քաշվի ես ժողովից,
շո՛ւտ, շո՛ւտ, թե չե...

Թորոսը մին կարմրատակեց, մեկ ել հանկարծ
ամբողջովին սարդնեց ու վոտքի կանգնելով գոչեց՝
ժողովականներին.

— Վերեք, այ անասուններ, ել ինչի՞ յեք իշի
նման ականջներդ կախ քցել... ով խելք ունի, թող
փախչի ես թալակից, վերեք, վերեք:

Յեվ կոշիկներն ամուր քռթացնելով նա ուղղվեց
դեպի դուռը, հուսալով, վոր գյուղացոց մեծ մասը
դուրս կգա իր հետևից և ժողովը կվիժի: Բայց հա-
շիվը սխալ եր. նրան հետևեց միայն թիկնապահ-
ների խումբը, իսկ հակառակ անկյունից՝ մենակ խը-
նդի Աթոն:

Ամենից վերջը կանգնեց Մաթի Շերեփը, վոր
նստարանների միջանցքով սահելեն փոքրիկ գլուխն
աջ ու ձախ եր դարձնում և խորհրդավոր ձայնով ա-
սում՝ —

— Թալակ ա, այ մարդ, փախեք...

Թորոս աղեն դռան տակից հետ նայեց ու յերբ
տեսավ, վոր գյուղացիք դասարանով մեկ նստած են,
բեխը թափ տալով ասաց:

— Ըհը՛, ես բեխերը վեր կանեմ, թե, վոր խա-
նութդ մի ամսում վոտով-գլխով կուլ չտան:

— Գնա՛, ջանըմ, յիկող տարի յես կխոսեմ դրանց
հետ, — ավելացրեց Սատանա Սաքոն.

Թորոս աղեն զայրույթից դուռը պատովը զար-
կեց և դուրս գալով գորգոռաց.

— Սոված շներ... գեղիս իշխաններին մտիկ...
վայ քանդվի են յերկիրը, վոր դուք պիտի կառավա-
րեք...



Թորոս աղեն գայուրից դուռը պատովը զարկեց յեվ
դուրս գալով գորգոռաց — Սոված ենե՛ր... գեղիս
իշխաններին մտիկ...

— Տեր-վողորմիա՛, տեր-վողորմիա՛, մրմնջաց տի-
րացուն և հառաչելով հետևեց Թորոսին:

Դասարանում խաղաղություն հաստատվեց: Կըը-
քերը հանգստացան: Մարդիկ աղատ շունչ քաշեցին
և ժողովի ընթացքը շարունակվեց:

Հրահանգիչը թերթելով կանոնադրությունն ա-
սաց.

— Հիմի պիտի մեր նորակազմ ընկերությունը կըն-
քենք: Դե ասեք, ի՞նչ անուն տանք, վոր լավ սաղա-
կան լինի:

— «Առուկոլ» — լավեց պատուհանի տակից Սու-
դիա Մուկուչի խոսքիս ձայնը, վոր դահլիճում ան-
զուսպ քրքիջ առաջացրեց:

Արտուշը, վայրկանապես բորբոքվեց ու տեղից
ցատկելով գոչեց.

— Առուկուլը մեղալավոր հին գելերիդ արհեստն
ա, իսկ ես ընկերությունը մենք կանվանենք «Ա.ՁԱ-
ՏԱՐԱՐ» վորովհետև նա պիտի ես տրորված ու քրք-
նախաշ գյուղացոց ձեր արյունոտ սուր-սուր ճանկե-
րից փրկի, ձեր դարավոր կապանքներիցն աղատի,
այո՛, «Ա.ՁԱ.ՏԱՐԱՐ»...

Շարունակությունը յերիտասարդների ուժեղ ծա-
փերի մեջ կորավ:

VI

Մյուս տարի գարնանը թորոս աղի տան դիմա-
ցի ցածրիկ խանութի ճակատը զարգարում եր մի ան-
պաճույճ ցուցանակ, վորի վրա խոշոր տառերով գըը-
ված եր. «Ա.ՁԱ.ՏԱՐԱՐ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹՅՈՒՆ.

Թեև խանութն անշուք եր և արտաքին վայլից
զուրկ, բայց գյուղացուն անհրաժեշտ ամեն տեսակի
ապրանք գտնվում եր նրա մեջ: Խանութի յեւ ու մու-

տը ամբողջ որն անպակաս եր: Պապի խեչոն, վոր «ԱԶԱՏԱՐԱՐ»-ի կառավարիչ եր ընտրված, այնպես եր յեռանդով գործին կպել, վոր չեր ուզում վտան այնտեղից դուրս դնի: Համարյա ամեն շաբաթ Հայկոտպից ապրանք եր ստացվում, բայց ելի չեր բավարարում պահանջը: Անդամների թիվն որեցոր աճում եր և հենց առաջին ամսում 200-ից անցավ:

«Ամեն բան լավ ու եժան» — սա յեր կոտպերատիվի վարչության լողունգը, վորը խոշոր տառերով փակցրած եր պատերին: Գյուղացիք փորձով համոզվել էին այդ բանում և դա յեր կոտպերատիվի գրավչության ամենամեծ գաղտնիքը:

«ԱԶԱՏԱՐԱՐԻ» այդչափ անսպասելի հաջողությունն ուղղակի կատաղեցնում եր Շախաթունովին, վորի նախկին գնորդները, մինչև անգամ ամեհախաս մուսաբիքը մեկը մեկին հետևելով դավաճանում էին նրան ու ընկերության գիրկն ընկնում: Թորոս աղեն շարունակ իր խանութի առջև նստած ներքին դայրույթով դիտում եր, թե ինչպես են իր վաղեմի գնորդները դիմացի պատի տակով գլուխները կախ անցնում յեվ կոտպերատիվի խանութը խցկվելով, մի քիչ հետո կապոցները կռնատակին դուրս գալի:

Մի որ, յերբ Թորոսի չաղ մուշտարիներից մեկը՝ Միխակը, ապրանքը կռնատակին դուրս յեկավ «ԱԶԱՏԱՐԱՐ»-ի դռնից և կուզը կախ ուղեց անցնել դեպի տուն, աղի համբերությունը չտարավ, նա մտ կանչեց Միխակին և խանութը քաշելով սկսեց հանդիմանել:

— Սանահեր, դու ել բարեկամությունը մոռացար, մեռոնը գետնովը տվիր... Ասա տեսնեմ, եսքան տարի ի՞նչ վատություն եմ արել... յերբ ուզել ես՝

տարել ես, յերբ ուզել ես՝ տվել ես, միորից-միոր հոխաթրիդ կպած չկամ:

— Չե, քավոր ջան, շնորակալ եմ, ո՞վ ա քեզնից գանգատավոր, — պատասխանեց Միխակը՝ քիչ կուչ ու ձիգ անելով:



Պապի Խեչեն, վոր «Ագասարարի» կառավարիչ եր քննրված, այնպես եր յեռանգով գործին կպել, վոր չեր ուզում վոսն այնտեղից գուրս գնի:

Չանց տաս... ես չի՞ քո առած չիթը, — տաք-տաք վրա տվեց թորոսը, կտորը կապոցից հանելով և նրա տուտը մատների արանքում տրորելով, — երկու նոմերի ամենափչացած ապրանք ա, ինքն ել բռակ. գործվածքը տես, ճանճը թեվով անց կըկենա միջիցը... ասա տեսնեմ վո՞նց ես առել, վոր եժան ա:

Թորոս աղեն վոտից-գլուխ մի լավ տնտղեց սանահորը և զայրութը հազիվ զսպելով ասաց.

— Թե շնորակալ ես, բաս ես ինչ ա:

Այդ խոսքի հետ նա խլեց Միխակի կռնատակի կապոցը և սեղանի վրա դնելով՝ ջղայնությամբ կապը քանդեց: Սանահերը շփոթմունքից և ամոթից

կարմրեց ու սկսեց կմկրմալեն արդարանալ, — դե, եժան ա, քավոր ջան, գիտես ելի, ամեն մարդ իր ոգուտին ա վազում. ո՞վ իր փողը դեն կը քցի...

— Եժան ան, վո՞րն ա եժան, չի՞ կարելի մի

— Վոնց... — Լեզուն ծամծամեց Միխակը, — հա, յես
ասեմ... 18 միլիոն հաշվեցին.

— Պան-պան-պան, 18 միլիոն, վայ կուրանան ձեր
աչքերը, կուրանան, ես չիթը 18 միլիոն...

Ապա թորոսը բաց թողեց կտորը, յերիտասար-
դական թեթևությամբ թռավ սեղանի են կողմը,
բարձր դարակից վայր բերեց մի թուփ չիթ և ամուր
սեղանին պարկելով գոչեց.

— Այ, 18 միլիոնանոց չիթ, յես ես ապրանքն
եմ ծախում, ես, մտիկ տուր, տես... բեր առածիդ հետ
բռնացրու, Պրոխորով ա, տասը նոմեր, մի տեղը տես,
Չուհարը տես... եղ առածդ ապրանք հո չի, դա զիբիլ
ա, փողոցումն ընկած լինի, չեմ վերցնի... բա աչք
ունեցող մարդը — ես կթողնի, եղ կառնի... 17 միլիո-
նով կտամ, կուզե՞ս, կտրեմ:

Միխակը տարակուսանքով շոշափում եր քավորի
ցույց տված չիթը և գլուխը որորում.

— Դե յեսիմ... ասում ենք ընկերությունի խա-
նութ ա, են ա եժան կլինի...

— Եղ ա հան, անհունն ա ձեր տունը քանդում,
անհունը... Ա՛-զան-տան-րան, — յերկար ու բարակ ծորե-
լով և ամեն մի վանկի վրա մի ահագին շեշտ դնելով
արտասանեց թորոսը, — այ մեռնաք դուք, Աղատարան...
ել չեք ասում քերթարան, թալանարան... ավազակ
շուն շան վորդիք — իրանց փորի, իրանց լափելու հա-
մար գեղի գլխին կրակ բերին, աղքատ-ուղքուտին
կլպեցին, կողոպտեցին... համբերեք, համբերեք, շատ
չի քաշի, եզուց-ելոր հենց ուտեն, աչքներդ բաց մնա,
սպասեք, թողը յերկինք կհանեն...

Այնուհետև թորոս աղեն որական հին մուշտա-
բիններին բռնելով, նրանց գլխին գայլի ավետարան

եր կարդում, բայց համոզել, հետ դարձնել չեր կարում:

Ազատարար-ի գործերը սպասածից շատ ավելի արագ եյին զարգանում: Առևտուրն որեցոր ընդարձակվում և անդամների թիվն ավելանում եր: Գյուղի մանր խանութները, մրցության չդիմանալով՝ իրար հետևից փակվեցին: Մնացել եր Շախաթունովի խանութը, նա ել հոգևարքի մեջ եր:

Թորոս աղեն՝ յերկար ու բարակ մտածելուց հետո, յերբ համոզվեց, վոր կոոպերատիվի գների դեմ բացարձակ մրցությունն անհնար ե, վորոշեց խարդախ միջոցների դիմել: Նա իր յերկու արշիններից մեկի գլխից կտրելով վերջոկ ու կես կարճացրեց և բացի դա՝ կշեռքի գործածական քարերից մի քանիսի տակի մասը փորելով՝ գրվանքի մեջ տաս-տասներկու մսխալաչափ պակասացրեց: Այնուհետև նա գյուղում բարձրաձայն կանչել տվեց, վոր ապրանքների գները կտարել ե, վոր ամեն բան կոոպերատիվից եժան ե ծախում և բացի այդ՝ իր լավ մուշտարիներին մինչև աշուն ապառիկ ե բաց թողնում:

Այդ միջոցը առժամանակ մի քիչ շունչ տվեց գործին: Շախաթունովի առևտուրն սկսեց կենդանանալ, մանավանդ, յերբ Թորոսն իր խանութի դռան վրա կպցրեց հանրածանոթ ապրանքների արժեքը, վորոնք իրոք ցած եյին կոոպերատիվի գներից:

Բայց Թորոսի բանը արդեն միանգամից ծովել եր: Խարդախությունը շատ յերկար չտևեց: Շուտով կեղծիքը բացվեց և գյուղացիք վերջնականապես յերես թեքեցին նրանից:

Այնուհետև թորոս աղան քուն ու դադարից ընկաւ: Գիշեր-ցերեկ անընդհատ նա մի մտքով երտանջվում, թե վոնց անի, վոր անի՞ծված ընկերության վարկը գցի և կորցրած գնորդներին նորից իր կողմը քաշի:

Մտածեց, մտածեց ու վերջապես ճարը գտաւ: Մի որ նա ուրախությունից փայլելով, բարձրացաւ իր սենյակը և շտապով մարդ ուղարկեց Մաթի Շերեփին կանչելու:

Յերբ կարոն կիսաձայն բարև տալով՝ արձանացաւ թորոս աղի ննջարանի անկյունում և իր մանր աչքերի հարցսական սուր հայացքը տնկեց տանտիրոջ վրա, վերջինս տեղից կանգնեց և մոտենալով դռանը՝ բանալին կամացուկ պտտեց: Այնուհետև նա մտեցաւ պատուհանին ու դիմելով կնոջն ու աղջկանը, վոր պատշկամբում բուրդ եյին ճիպոտում, շատ կուպիտ ձևով գոչեց.

— Բաշվեք աչքիս առաջից, գլուխ չունեմ, վոր դիմանա եդքան շխկոց-թխկոցին. անկյալներդ քաշեք կորեք. հայդե, շուտ:

Հրամանը ընկաւ և կատարվեց: Հետո թորոսն զգուշությամբ փակեց բաց պատուհանը և խուզարկու հայացքով ննջարանի չորս անկյունը չափչփեց: Յերբ նա վերջնականապես համոզվեց, վոր իրանց լսող չկա, Մաթի Շերեփի թևիցը քաշելով նստեցրեց տախտի վրա իր կողքին, և մի պապիրոս իր բերանը դնելով ու մյուսը խոսակցին մեկնելով, խորհրդավոր ձայնով ասաց.

— Կարո ջան, յես քեզանից հավատարիմ մարդ չունեմ, ելի դու իմ դարդին մի դարման կանես:

Կարոն ինքն իրան ուռելով, տախտի ծայրից մի քիչ թորոսին մոտեցավ և իր պսպղան, խորամանկ աչքերը Շախաթունովի յերեսին գցելով նույն խորհրդավորությամբ պատասխանեց.

— Եհ, վոր գործդ ինձ ընկավ, սիրտդ լեն պահի սողես, գլուխս քեզ մատաղ կըտամ:

Թորոսը ագահաբար ծուխը թոքերը քաշեց և ձեռը դիմացինի ուսին դնելով՝ շրթունքները նրա ալանջին մոտեցրեց և կամացուկ շշնջաց.

— Կարաս կոպերատը վառե՞ս...

Կարոն ցնցվեց և ուրախությունից ծուլ ելավ: Նրա մանրիկ աչքերը խոր բներում ճրագի պես վառվեցին, դեմքը փայլեց Սաթայի ժպիտով ու նա սկսեց կանգնած տեղում անհանգիստ շարժումներ գործել. կասես ինչ վոր դժոխային սլար եր դա:

Հը՛, դե ասա, կարա՞ս թե չե.— կրկնեց աղեն՝ ինքն ել վոտքի յելնելով և լայն չռած աչքերը կարոյի փայլատակող դեմքին հառելով:

— Վո՞նց թե կարաս... Թորոս աղա, ձեռես առե՞լ... Թե՞ խամի տեղ ես դնում: Ինձ Մաթի Շերեփի կասեն. մենակ քո հրամանով քանի՞ այգի փրթած կլինեմ, քանի ծառուտ սունգ արած, քանի դիզ ու մարագ վառած. մազերիս համարքով-մեկ տուն եմ բրիշակ արել... Վո՞նց թե կարաս... բա արհեստիս անունն ի՞նչ ա...

Յեվ նա գդակը ճակատից հետ տանելով այնպիսի վոգևորությամբ սկսեց չուխի թևերը կշտել, վոր կասես թե պատրաստվում եր իսկույն և յետ ավերածության ձեռնարկել:

— Լսի, Կարո, — նորից խոսեց Թորոսը, — Լավ մտածի, դժար գործ ա, յես վախում եմ... չկարենաս...

— Հլա տեն, տո եդ ի՞նչ ես ասում, ադա, խի՞, յես
 ո՞վ եմ, — վրա տվեց վիրավորված մասնագետը և փոր-
 ձեց ապացույցներ բերել իր կարողության մասին,
 բայց թորոսը ընդհատեց.



Կարո ջան, յես բեզանից հավասարիմ մարդ չուենմ:

— Կնց, կնց, մի ճրպրտա, ես վոչ դեդ ա, վոչ
 մարագ, վոր մի կրակ դրիր, պրծավ: Մա փակ խա-
 նութ ա, գիտես... համ ել՝ ճոթեղենը դժար վառվող
 ապրանք ա, լավ մտածի:

Կարոն հեզնորեն գլուխը սլտտեց և լիակատար
 ինքնավստահությամբ պատասխանեց.

— Թորոս ադա, ես գլուխը դեռ չի մեռել, Մա-
 թի Շերեփն եմ, հենց անեմ, վոր Ազատարար-իգ տե-
 ղը եգուց-ելոր սխտուր ցանեն, լավ կլի՞... դու ինձ մի
 գավ արադ տուր ու հանգիստ գնա գործիդ:

Նա վերջացրեց ու նորից թևերը վեր քաշելով
 իր անհանգիստ աչքերը վոզևորությամբ պսպղացրեց:

— Ե՛ղ ա, հա՛ն, չարդ տանեմ, հենց կանես, վոր սկի տեղը չերևա. մոխիրը քամնն կտաս, — ավելացրեց թարոսը հրճվանքով և սլահարանից մի գավ արաղ հանելով, մեկնեց Կարոյին և ասաց, — իսկ թե Աստու աջողութ յուռնով՝ ասածիդ պես սխտորատեղ շինեցիր, քո խալաթը աչքիս վրա:

VIII

Հաջորդ որն եր, իրիկնադեմին: Կոլոտենց Կարոն ապրանք գնելու պատրվակով մտավ կոռպերատիվի խանութը: Գնորդները շատ եյին: Վորովհետև առևտուրը վերջանալու վրա յեր, այդ պատճառով ամեն մեկն աշխատում եր իր գործը առաջ գցել: Կառավարին ու պատանի ոգնականը սաստիկ զբաղված լինելով, չեյին կարող նկատել, թե ինչեր ե կատարվում խանութի մութ անկյունում:


Բոպեն նպաստավոր եր: Կարոն մի քիչ թոնթորաց, վոր իբր ստիպում են հերթի սպասել և նստելով խանութի խուչ անկյունում՝ կողքի վրա պակասքած արկղի վրա, սկսեց մի պապիրոս փաթաթել և ուշի ուշով շրջապատը լավ դիտել: Նրա միտքը զբաղված եր այն հարցով, թե հնարավոր ե արդյոք փակ խանութից վորևե կերպ դուրս պրծնել: Յերկուրոպեյից հետո Կարոյի մանր աչքերը վառվում եյին հրճվանքից: Մասնագետը ճամփեն պատրաստ եր համարում. առաջինը՝ գոան գլխի հաստ յերկաթյա վանդակների արանքը, իսկ յերկրորդը՝ բակի կողմի բարակ պատը, վորը հեշտությամբ կծակվեր են սեղանի ծայրին ընկած ժանգոտ մուրճի ոգնությամբ:

Յերբ վոր մութը վրա հասավ և խեչոյի գլուխն ել ավելի խառնվեց, Մաթի Շերեփն ոգտվելով բարե-

հաջող վայրկյանից, կատվի նման կծկվեց ու մտնե-
լով արկղը, կուչ յեկավ իր նեղ բնուամբ:

Առևտուրը վերջացավ: Գնորդները քաշվեցին:
Պատանի գործակատարը դուրս յեկավ ու փողոցին
նայող դուռը յերկու կողպեքով փակեց: Խեչոն ներսից
հետնափակերը գցեց և ինքն ել բակի կողմի նեղ դռ-
նակից դուրս գալով, ամուր կողպեց ու գնաց:

Կարոն շունչը պահելով զգուշությամբ դուրս սողաց
իր անհարմար դագաղից և իշուկի վրա նստեց:



**Կարոն շունչ պահելով զգուշությամբ դուրս սողաց
իր անհարմար դագաղից,**

Նա սպասում էր, մինչև վոր փողոցում յերթևեկու-
թյունը դադարի: Ամառնային պարզ գիշերներից մեկն

եր. սիրուն կիսալուսինը դռան գլխի վանդակապատ նեղ
անցքից խանութի մեջն եր նայում, իսկ Կարոն միշտ
պահվելով, խույս եր տալիս նրանից:

Յերբ վոր վոտքը խաղաղվեց և հոգնատանջ
գյուղացիք խոր մրափի մեջ ընկան, Կարոն կամացուկ
յելավ և իր սև գործն սկսեց:

Նախ և առաջ նա հավաքեց անկունում կիտած
ծղոտը, վոր հանված եր շուշեղենի արկղից և կուտա-
կեց ուղիղ դարակների տակ: Այնուհետև նա մոտեցավ
նավթի լիքը տակառին ու ջրի ամանը առնելով հե-
ղուկն այնքան առատորեն ցանեց ապրանքի վրա, վոր
ամեն ինչ տակվետակ լավ ծծվելով՝ տսկվեց:

Նախապատրաստական աշխատանքը վերջացնե-
լուց հետո, Մաթի Շերեփն աչքը գցեց դռան գլխի
նեղ անցքին ու մի վայրկյանում յազլցեց դուռն ի
վեր: Լուսինն արդեն թեքվել եր: Վարոն սկսեց փոր-
ձել՝ կարա արդյոք են յերկաթե հաստ ձողերի նեղ ա-
րանքով ծլկվել: Նա գլուխը զգուշությաբ դուրս հա-
նեց, շտապ դիտեց արծաթագոծ լուռ ու դատարկ փո-
ղոցը, ապա կրկին անմիջապես ներս քաշվեց: Փորձն
աջող եր ու փախուստի ճանապարհը ապահով: Նա
հրճվանքից հեռավ հանեց գրպանից լուցկին, վառեց
թղթե կծիկը ու շարտեց հեռու, դարակների տակ...

Նավթաշաղաղ ծղոտը վայրկյանապես բռնկվեց
և ճարճատյուն ու բոցը մեկեն լցրին խանութը: Վոճ-
րագործը դռան գլխից մեկ ել շլինքն հետ թեքեց,
ծխի միջից դողով նայեց են լուսափայլ կարմրալեզու
հրեշին, վոր գեհենի դևի պես արնոտ յերախը բացած
ազահաբար կուլ եր տալիս ամեն ինչ: Վայրկենաչափ
հրճվելով Կարոն ճկեց իրանը և ոձի պես կուտապ-կու-
տապ նեղլիկ անցքից դուրս սողաց:

Մինչև հավարը տարածվեց ու բեզարած, քնաթաթախ գյուղացիք ամեն կողմից գոռում-գոչումով



Հեղուկն այնքան առատորեն ցանեց ապրանքի վրա, վոր ամեն ինչ սակվեցակ լավ ծծվելով՝ սսկվեց:

վազեցին՝ բանը բանից անցել եր: Արդեն ծածկը նըստել եր ու թերերեց գերաները ծխում եյին հատակին:

IX

Կուսարացին ամբողջ գյուղը հավաքվել եր թամաշի: Կոռպերատիվի խանութը վողորմելի կմախքիյեր նմանում: Բարակ-մարակ ծխացող տաք մոխրակուլյոտի շուրջը ցցված եյին մնացել մրաշաղախ, մերկ պատերը: Դռնատեղի մեծ խոռոչի ճակատից կասես անձայն վողբում եր Ագասարար-ի սևերես, ամոթա-

հար ցուցանակը: Հետաքրքիր մանուկները իրար հետ
 կովշտելով փորում եյին մոխիրը, բայց պիտանի և
 վոչ մի բան գտնել չեյին կարողանում: Անգուժ հրե-
 դեն հրեշը կլանել եր ամեն ինչ:

Գյուղացիք լուռ ու մունջ դիտում եյին ավե-



րակը և տարակուսան-
 քով գլուխները պտ-
 տում: Թեև Սեչոն մա-
 քուր մարդու համբավ
 ունեւր վողջ գյուղում,
 բայց... գործի հանգա-
 մանքներն այնպես
 եյին դասավորված,
 վոր նույն իսկ ամե-
 նամտ ընկերների
 սրտի խորքում խուլ
 կասկածանք եր ծա-
 գում նրա մաքրու-
 թյան մասին: Իսկ
 վոմանք ել բացերաց
 ստում եյին, թե հրդե-
 հը նրա սարքած գոր-
 ծըն ե:

Նայեց լուսափայլ, կարմրա-
 լեզու հրեցին. վոր գեհեցի
 դեզի պես արեոս յերախը բա-
 ցած, ագահաբար կուլ եր սա-
 լիս ամեն ինչ.

Սեչոն ուղղակի մե-

ռած եր ու թողած չեր:

Ամբողջ գիշեր նրա աչքը չեր կպել: Հանելու-
 կային պայմաններում առաջացած հրդեհը, այնքան
 ծանր եր ազդել նրա զգայուն խղճի վրա, վոր ել լե-
 զուն չեր պտտում, բերանը խոսք չեր դալի ինքն
 իրան պաշտպանելու: Հոգու խորքում նա զգում եր,
 վոր սոսկալի աղետի ամբողջ պատասխանատու-

Թյուլնն իր վրա յե ծանրանում: Նրան թվում էր,
վոր յեթե ինքն ավելի աչալուրջ, զգույշ, ուշադիր
լիներ, նման փորձանք՝ պետք է, վոր չպատահեր՝ և
իր անզգուշությունն եր նրան ամենից շատ տան-
ջում:

Ամբողջ գիշերը Ա.գասարար-ի շուրջն ապար-
դյուն տանջվելուց հետո, այժմ արդեն Պեչոն տանն եր.
Չղայնացած ման եր գալի ու ինքն իրան մրմնջում. —
ի՞նչ ասեմ, վո՞նց արդարանամ, վորի՞ բերանը փակեմ...

— Ախր, դարմացք բան ա, այ մարդ, դոները
ամուր փակած, բոլոր պատերն անվնաս, հարևաննե-
րը չորս կողմը կտուրներին քնոտած, ես վո՞ր սատա-
նեն ներս մտամ, — խոսեց Ա.գասարար-ի շուրջն հա-
վաքված խեղճ գյուղացիներից մեկը, վորի սիրտը
մումուում եր կորցրած փայի համար:

— Ե՛, զո՛ւր բան ա, ճշմարտություն ասածդ աշ-
խարհքում չկա, չկա, դատարկ խոսք ա. ամեն բան
հարամվել ա, ժամանակիս հարազատ ախպորն ել հա-
վատ չկա, ախպո՞րը, — սրտնեղությամբ վրա բերեց
մի ուրիշը, վոր յերկար տատանվելուց հետո, դեռ յե-
րեկ եր ընկերությանն անդամ գրվել:

Նուշիկենց Սաքոն, վոր ժամերով տնտղում եր
խանութի ներսն ու դուրսը՝ գործի գաղտնիքը պար-
զելու նպատակով, գլուխն որորելով ասաց.

— Ախպեր, ես ի՞նչ հանելուկ ա, սկի՞ բան չի
հասկացվում:

— Տո, խի՞ չի հասկացվում... տղամարդ եք՝
պարզ խոսեք, են ա միջի մարդի գործն ա... ո՞վ կը-
մտներ փակ խանութը, կամ թե մտամ՝ կգողանար,
վառելուց ի՞նչ ոգուտ ուներ, — իշխանական բարձր
տոնով խոսեց Սատանա Սաքոն և վերջում ավելաց-

րեց, — տեղն ա, պտուղներդ դուրս գա, հիշում եք
ժողովի որը վոր, ասում ինք եհտիրարով, ուժով մար-
դի տվեք գործը, հենց պիտեյիք թշնամությունն ենք
անում... հիմի տեսա՞ք, վո՞նց ելավ մեր ասածը...

Ամոթահար գյուղացիք իրար յերեսի նսոյելով,
ծանր հանցավորի պես աչքերը կախ Գցեցին:

— Վո՞նց եր թորոս ադի մարգարեությունը,
վոր ասում եր՝ մի քառումը կոռպերաթիզ քոզը յեր-
կինք կհանեն... այ տա, մարդը խելքի բուն ա, ով
ինչ ուզում ա ասի, — վրա բերեց տիրացուն տերվո-
ղորմին հանելով:

Գզրի Գեվոն, վոր ներկա յեր զրույցին, սլարտք
համարեց հիմնավորել տիրացվի կարծիքը:

— Հարկ ե, ադեն խելքը կլի. խելքը բողազիցն
ա կապված: Մարդն որական գաթա-հալվա յա
ուտում, չայ ու փնջով ա ապրում, համա յես՝ վոս-
պախաշու ել չեմ ճարում, բա խի՞ պիտի նրա չափ
խելք ունենամ:

Թեև գյուղացոց վրա ծիծաղելու սիրտ չկար,
բայց և այնպես վոմանք թեթև ժպտացին նախկին
գզրի յուրահատուկ գյուտի վրա, ինչ սուղիա Մու-
կուչը բարձրաձայն քրքջալով վրա բերեց.

— Եդ ա, հա՛, ողորմի հորդ, լավ ես գտել, խելքը
բողազիցն ա կախված: Արի տես, վոր ամեն մարդ
չի հասկանում եդ բանը: Գեղի լակոտ-լուկուտը փո-
րը կուշտ իշխաններին ել մարդատեղ չեն դնում.
ամեն բանի սովածներին, տկլորներին են մեջ քա-
շում... այ տեսա՞ք, ինչ ոյին բերին, տեղն ա, անդը,
շատ լավ ելավ, թող խելքի գան, մարդ ճանաչեն...

Բաղալենց Արամը, վոր՝ այգում դիշերած լինե-

լով, նոր եր գալիս դեպքի վայրը դիտելու, լսեց սու-
դիի խրատն ու զայրացած բացականչեց.

— Դ՛հաք վոնց եք, դ՛հաք, հին գելեր, ճանաչուս
ենք. բոլորիդ ել ձվի պես ատամներովս ենք տվել...
տաղ արեք, մարդի սրտով գնացեք, թե չե բերանս
բաց կանեմ ու աչքերս կխփեմ...

Արամն անցավ բակի կողմը այրված խանութը
դիտելու, իսկ սուդիեն նրա հետևից աչքերը խոժոռե-
լով, ինչ վոր հայհոյանք ուղղեց:

— Ախպիր, զարմանքն ինձ տարել ա, թե մի
ժամում եսքան ապրանքը վոնց վառվեց, մոխիր դա-
ռավ, վոր նշանն ել չի յերևում. ինչքան քանդում
եմ, փոշի յա տակվետակ, — խոսեց մի թախծադեմ
գյուղացի՝ մոխրոտ ձեռները թափ տալեն այրված
խանութից յելնելով:

— Վառող վարպետը լավ գիտի իր գործը, —
պատասխանեց Սատանեն, — նավթը ծով արած կլի,
պրծավ գնաց...

— Ե՛, բա ինքը վոնց ա պրծել կրակից.

— Այ, եդ խելքի տերն եք հա՛, — հանդիմանեց
Մուկուչը, — տո, անստուհ, չե՞մ կարա կրակ գցելուց
հետո հանգիստ դուրս գամ ու դուռը ջուխտ կողպե-
քով պինդ փակեմ... ախր ձեր կերածն ինչ ա, վոր
խելքներդ ինչ լինի...

— Ի՛նչ ասեմ, հերս, հավատալը դժար ա, ախր
Խեչոն են տղեն չեր... կամ խի պիտի միտքը ծռեր,
հարամությունի աչք դներ. մարդ իր հացին քացի
կտա՞, — տարակուսանքով հարցրեց մի կրճաբաց,
վոտաբորիկ գյուղացի:

Սուդիեն աչքի պոչով լավ չափեց խոսակ-

ցին և մորուքը կարեկցարար շարժելով, հառաչանքի հետ ասաց.

— Խեղճ, միամիտ վողորմելիք... բա կեղտը վո՞նց կծածկեն, գողացածը, լափածը վո՞նց իղակորուստ կանեն... Է, խեղճ ասած բանը չկա, չկա՛ն ձեր գլխում:



Մեկ մեկ թվեց իր կասարած բազմաթիվ վոճիրները, շեշտելով, վոր շատերի գրգիչն ու եեղիճակը Թորոս Աղեն ե յեղել:

— Եղենց շաներ, կերածի պատասխանը վո՞նց կտար: Եգուց-ելոր Հայկոպից հաշվատեսներ կվային, լափածը կպահանջեյին խորհրդավոր կիսաձայնով ավելացրեց Սատանա Սաքոն:

Ունկնդիրներից շատերը կասես նոր միայն հասկացան թե ինչու՞ն է գաղտնիքը և գլուխները շարժելով հավանության նշան արին: Իսկ կրծքաբաց գյուղացին յեռանդով վրա տվեց.

— Շիտակ ա ասում ելի՛, Աստված դրանց տունը քանդի: Վորին տվինք՝ տերը չելանք, վորի

ձեռն ընկալ՝ լափեց, աղքատին վոտի տակ տրորեցին, եսենց ել գուլում կլինի՞...
— Արտուշ վարժապետիդ ասա, խեչոյին հրեշտակ եր համարում:

— Ի՛նքը վոնց ա, ինքը, Արտուշդ... ընենց սուրբ-սուրբ եյիք անում, կասես յերկնքիցն եր իջել՝ փեշերն ամպոտ... Ես գլուխս սրի կտամ, թե վոր դառնարածի թոտի մատը խառը չլի եդ բանում... ըհը՛, հիմի կատանեք,— շեշտեց Շախաթունովը, վոր հենց նոր եր դուրս յեկել և պապիրոսը վսուելով դառնությամբ ավելացրեց,— անաստվածներ, հերիք ա ժողովրդին տանջեք է...
— Ժողովրդի տունը քանդվի, ել ի՞նչ թողին նըրանում... ըհը՛, հրես վերջի թելին ենք հասել,— ասաց մի խեղճ գյուղացի, հազար տեղից կարկատած չուխի փեշը ցույց տալով:

— Ե՛, քանդվելու յերկիր ա, չելանվ, մարդ ես պեղից պիտի կորչի,— խոսեց մեկը վշտացած և ամբոխից պոկվելով արագ-արագ հեռացավ:
Թորոս աղեն աչքը քցեց խանութի վորբայցած ցուցանակին ու հեզնական տոնով ասաց.— Ագասարար... բախտավոր քո անդամներին, լավ ազատեցիր մարդկանց...

— Իսկական Ագասարար, Թորոս աղա, չխսի հանեց չխսի.— վրա բերեց սուգիեն բարձրածայն քրքջալով, վորին արձանագանքեցին ներկա յեղող իշխանները:

Գյուղացիներին տրտունջը գնալով սաստկանում եր: Իշխանների դավադրական խոսքերը այն աստիճան գրգռեցին ամբոխին, վոր թամաշեն վերջի վերջո բողոքի ցույցի փոխվեց և դայրացած ժողովրդով:

Գյուղացիներին տրտունջը գնալով սաստկանում եր: Իշխանների դավադրական խոսքերը այն աստիճան գրգռեցին ամբոխին, վոր թամաշեն վերջի վերջո բողոքի ցույցի փոխվեց և դայրացած ժողովրդով:

վորդը իշխանության դիմելով, պահանջեց անմիջապես ձերբակալել Խեչոյին և որեքի ձեռը տալ:

X

Յերեք-չորս ամիս կլինեի, ինչ Խեչոն տառապում էր բանտի խոնավ նկուղում: Արտուշն արդեն վարկարեկված էր գյուղում, վորովհետև ժողովրդին համոզել էյին, վոր նա դավաճանել է կոռուպցիայի գործին և իբր թե խանութի հրդեհումը նրա ծրագրով է կատարված: Միևնույն կասկածանքով Տիկոն պաշտոնանկ էր յեղած և խորհրդի նախագահի պաշտոնը Շահխաթունովի խնամի Մատոյին էր հանձնված:

Իշխանների լեզուն նորից յերկարել էր, ճակատները յետ բացվել:

Թորոս աղի խանութը կրկին կենդանացել էր, ցրված հաճախորդները կամաց-կամաց ելի հավաքվում էյին: Գործն որեցոր աճում էր, առուտուրը ծավալվում:

Բայց... մարդիս դլխի գալիքն ու կարող և իմանալ: Մի անսպասելի հայտնություն նրա բաղդին քար գցեց:

Մաթի Շերեփը մի որ շատ ծանր հիվանդացավ: Մահի մերձավորությունն զգալով, նա հետ նայեց իր կյանքի սև ու մութ ճանապարհին և քարացավ սարսափից: Ամեն քայլում նրա գեմը ցցվում էյին իր կատարած անհամար վոճիրները, մեկը մեկից ահավոր, մեկը մեկից սոսկալի, վորոնց շուրջը լքվում էյին հուսահատ հառաչանքներ, անմխիթար լաց ու կոծ, խելակորույս աղաղակ և այրված սրտերից բղիտղ անկճք, անկճք ու անկճք...

Ու սեւալոր ճամբի ծայրին նա տեսնում էր
դժողքը իր ամբողջ սարսափներով, ինչպես վոր նկար-
ված էր խանդարված ժամի պատին՝ գեհեների անմար
բոցեր, ահուելի կպրի կարասներ, կակիծ, մոմուռ,
ու հավիտենական տանջանք... «Մեղա՛, մեղա՛» մեքե-
նաբար մրմնջացին հանցավորի շուրթերը:

Հիվանդն աչքերը բացեց ու պաղ քրտինքը
սրբելով կանչել ավեց տերտերին և Արտուշին ու
դրկից հարևանների ներկայությամբ խոստովան-
վեց իր անհամար մեղքերը: Մեկ-մեկ թվեց իր կա-
տարած բազմաթիվ վոճիրները, շեշտելով, վոր շատե-
րի դրդիչն ու հեղինակը թորոս աղեն և յեղել: Ամե-
նից հետո հիշեց Ազատար-ի հրդեհի պատմությու-
նը և վերջին անգամ թողություն աղերսելով, հոգե-
վարքի մեջ ընկավ:

Այս խայտառակ մերկացումը թորոսի մեջքը
կոտրեց: Լուրը քաղաք հասավ թե չե, Հայկոսպը
գործին տեր կանգնեց: Հաջորդ ուրը Սեչոն բանտից
դուրս յեկավ ու իսկական հանցավորը՝ Շախաթու-
րովն անմիջապես ձերբակալվեց: Գործը արդեն պարզ
էր հայելու նման:

Դատարանը թորոս աղին դատապարտեց տա-
րիների կալանքի և բացի այդ վորոշեց ընկերության
կրած ամբողջ փաստը նրանից բռնագանձել:

Վորոշումը կատարվեց: Գյուղի կրծքի վրայից
մի ծանր քար վերացավ և ժողովուրդը լիաթոք
շունչ քաշեց:

Յերկու-յերեք ամիս անց, հենց միևնույն փո-
ղոցում, այրված շինության դիմաց, թորոս աղի շեն-
քի մեջ վերաբացվեց Ազատար-ի խանութը, ել
ավելի ճոխացած, վոր գործում և մինչ րոստոյ

Շախաթուհուովն հիմի ել կա, նոր ե ազատվել կա-
լանքից, բայց այնպես ե բուրթը թողել, վոր ճանաչել
չի լինի: Մեջքը սաստիկ ծովել ե, բութը ցնցվել, դուրս
ընկել. կնճիռները հարյուր տեղից ակոսել են յերեսը,
իսկ վաղեմի են յեռածալ բուխախի տեղ, ծնոտի տակ
թ.սոամած մորթն ե միայն կախ ընկել: Ել. թորոս
աղա չկա, Շախոյի թորոն ե նա, վոր խուհայած՝
բազմակարկատան չուխի մեջ փաթաթված, գիշեր-ցե-
րեկ մեծ չիբուխով դուլլատարի կծու թուխունն ե
ծխում:



Սեվ-սրբատաշ քարե տու-
նը, վորի գլխին կարմիր
դրոշն ե ծածանվում, ամ-
բողջովին գրավված ե: Վե-
րին հարկում գյուղխոր-
հուրդն ե, ընթերցարանն
ու ակումբը, իսկ ցածի
խանութների ամբողջ շար-
քի ճակատը «Ա.Զ.Ա.ՏԱ-
ՐԱՐ»-ի գեղեցիկ ցուցա-
նակն ե զարդարում: Սա
չըջանի ամենալավ կոոպե-
րատիվն ե համարվում: Նրա
վարիչն ելի Պապի Խեչոն
ե, բայց նա արդեն յերեք
ոգնական ունի ե խանութ-
թում գնորդները ամբողջ
որը ղժվժում են ճանճի
պես:

Հիսուն տարվա սեփական
արեվա մաշվեց, ել մին-
չեվ յե՞րբ համբերեմ...


Թորոսը միշտ նստում է դիմացի պատի տակին և
չիբուխի դառը ծուխը ծծելով մեկ նայում է խանու-
թի յեռ ու գեռին, մեկ ել այրված սրտի խորքից հա-
ռաչում. — անխ, անխ ու մեկ ել անխ:

— Բո՛լ ա քեզ տանջես, տնաշեն, — սիրտ են տալիս
հարդից ընկած՝ գյուղի նախկին իշխանները, — հո
աշխարհքը միշտ ել եսենց չի եթա, համբերող իլ,
Ստեղծողը վողորմած ա, յերկնքի դուռը կբացվի, մի
լուս ու ճար կլի մեզ, համբերի...

Իսկ Թորոսը այդ միջոցին ծուխը պնչից հանում
է և ցավազար աչքերը չորս բոլորը սլտտելով
խեղդված ձայնով մղկտում.

— Մինչի առուն ջուր կգա, գորտի աչքը դուրս
կգա... համբերի՛... վո՛նց համբերեմ տնաքանդ, ես-
քան դուլումն ել տանել կլինի՞... հոգիս բերանս
հասցրին, յերկնքից գետինք տվին, ես հինգ տա-
րում հիսուն տարվա ումր ու արևս մաշվեց, ել մին-
չև յե՛րբ համբերեմ...

Թևակտոր Թորոս աղեն սկսում է բորբոքվել,
նրա ձայնը հետզհետե թափ է առնում, բարձրանում
մինչև անհետատնում և յերկարատե խռպոտ հազի վա-
րար ալիքների մեջ:



Կ Ա Ր Դ Ա Յ Ե Ք

ՀԱՅԿՈՈՊԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒ-
ԹՅԱՆ 11-Դ ՊՐԵՄԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ 11-Դ
ԳՐՎԱԾԲԸ


== Զ Ի Լ Ա Վ Յ Ա Ն Ի ==

„Փ Ր Կ Ի Զ

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ“

ՊԱՏՄՎԱԺՔԸ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ Ե

ԾԱԽՎՈՒՄ Ե ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐՈՒՄ



[154.]

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

A^I₈₅₄₉

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045697